ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ *«Հայոց ցեղասպանություն» թեմայի դասավանդման առաձնահատկությունները*

ԱՌԱՐԿԱ Հայոց պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Բաղդասարյան Հովիկ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Հարթաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Նոննա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……...……. էջ 3

«Հայոց ցեղասպանություն» թեմայի դասավանդման նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները.....էջ5

Դասի մշակում: Դասի պլանի նմուշ-օրինակ.....…… էջ 9

Եզրակացություններ ……...…… էջ 13

Օգտագործած գրականության ցանկ ……...…… էջ 14

Ներածություն

Կրթական բարեփոխումների հիմնական նպատակը հատկապես ավագ դպրոցում աշակերտներին հասարակությանն արագ ինտեգրվելն է: Դրան հասնելու համար լիովին պետք է փոխել վերաբերմունքը կրթական նախկին համակարգի նկատմամբ:

Կրթական աշխատանքի հաջողությունն ընդհանուր առմամբ կախված է նրանից, թե ինչպես է կազմակերպվում երեխաների աշխատանքը առանձին առարկաների դասավանդման ժամանակ: Ներկայումս ամենաբարդ և հրատապ խնդիրներից մեկն էլ հիմնարար գիտելիքներով զինված, ազատ, ինքնուրույն հասարակության մեջ լիովին ներառված և ստեղծագործ անհատների պատրաստումն ու դաստիարակումն է: Այս հարցում շարունակում է իր անգնահատելի դերը ունենալ «Հայոց պատմություն» առարկան:

«Հայոց պատմություն» առարկան բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ: «Հայոց պատմություն» առարկայի առանձին թեմաների դասավանդումը կարևոր դեր ունի սովորողների ազգային ինքնագիտակցության ձևավորման հարցում: Դրանցից է «Հայոց ցեղասպանություն» թեման:

Հայոց ցեղասպանությունը հայոց պատմության ամենառողբերգական էջերից է, որը հայ ժողովրդի պատմական զարգացման վրա թողել է ոչ միայն քաղաքական ծանր հետևանքներ, այլև հոգեբանական ճնշող ազդեցություն ցեղասպանությունը վերապրած ժողովրդի սերունդների վրա:

Այսօր էլ այն ուղերձները, որոնք հղվում են հասարակությանը այս թեման մատուցելիս, հսկայական նշանակություն ունեն այս ողբերգության հոգեբանական հետևանքների հաղթահարման, հասարակության բարոյական և հոգեբանական ինքնության ձևավորման, ինչպես նաև հայ ինքնության ամրապնդման համար թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում:

Երկար տարիներ Հայոց ցեղասպանության թեման դասավանդվել է դպրոցում առանց հաշվի առնելու թեմայի ազդեցությունը աշակերների վրա: Մշակված չեն եղել թեմային առնչվող հստակ ձևակերպված ուղերձներ:

Ցեղասպանությունները մարդկության պատմության ամենաամոթալի էջերից են: Դրանց դեմ պայքարը պետք է լինի համայն մարդկության առաջնահերթ խնդիրը: Սա պետք է լինի հատկապես ավագ դպրոցի աշակերտի առաջնահերթություններից մեկը ոչ միայն այն բանի համար , որ մենք ապրել ենք այդ արհավիրքը , այլ նրա համար, որ նրանք կարողանան գնահատել այնպիսի արժեքներ , ինչպիսիք են հայրենիքը, մշակույթը, հավատը, լեզուն:

Այս հանգամանքներով էլ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել նորովի ներկայացնելու «Հայոց ցեղասպանության» թեմայի մատուցման մեթոդական առանձնահատկությունները, ձևերը, մշակել ու կազմել մեթոդական նյութ: Խնդիրը ավելի **արդիական** է դառնում կապված մեթոդական գրականության սակավությամբ:

Հետազոտության հիմնական **նպատակն** է ներկայացնել «Հայոց ցեղասպանության» թեմայի դասավանդման առանձնահատկությունները:

Հետազոտության **օբյեկտը** դասավանդման «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման գործընթացն է, իսկ **առարկան՝** «Հայոց ցեղասպանության» թեմայի դասավանդման առանձնահատկությունները բացահատումը:

Վերջնական արդյունք ապահովելու համար կարևորվում է նաև **հետազոտության մեթոդների** ընտրությունը: Աշխատանքում օգտագործվել են վերացարկման, վերլուծության փորձի մեթոդները:

«Հայոց ցեղասպանություն» թեմայի դասավանդման նպատակները, խնդիրները և ակնկալվող արդյունքները

Արժևորելով ՀՀ հանրակրթական դպրոցներում հայոց պատմության ուսումնասիրությունը, ազգային հիմնախնդիրների հետ սովորողների ծանոթացումը, պետք է ամրագրել, որ պատմական ժառանգությունը, փորձն ու դասերը հսկայական արժեր են ներկայացնում: Դրանք ծառայում են սովորողների բարոյական և մշակութային զարգացմանը, հասարակության մեջ իրենց տեղը գտնելուն, իրենց պատմական արմատները ճանաչելուն և պատմական հիշողությունը ձևավորելուն:

Պատմության, դասաժամերի ընթացքում մենք հաճախ առընչվում ենք այնպիսի փաստերի հետ, ինչպես օրինակ հայրենիքի կորուստը, պետականության կորուստը: Բայց բազմաթիվ օրինակներով կարող ենք փաստել նաև հայի ոգու ուժը, կամքը, ազատության ձգտումը, իր երկրում ազատ ապրելու ձգտումը: Ոչ միայն այս թեմայի, այլև տարբեր դասաժամերի ընթացքում պետք է վեր հանել այն գաղափարը, որ հայը ապրել, ապրում և ապրելու է արժանապատվորեն՝ իր ուրույն տեղը ունենալով համաշխարհային հանրության երկնակամարում:

Հայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարը հայ ժողովրդի ազատագրական պայքարի շարունակությունն է մեր օրերում հանուն իր պատմական հայրենիքում ազգային պետականության վերականգնման, հանուն ազատ և անկախ ստեծագործ կյանքի:

Թեմայի շրջանակում պետք է ձգտել հասնել նրան , որ սովորողները ընկալեն մեր ազգային նպատակները, ազգի առջև ծառացած խնդիրները և գիտակցեն իրենց դերը, այդ խնդիրների իրագործման ճանապարհին: Դասավանդման ընթացքում պետք է կարևորել ազգային և համամարդկային արժեքների, ազգային գաղափարախոսության, ազգային ինքնագիտակցության ձևավորումը:

Այս խնդիրների լուծումը կարելի է կազմակերպել բանավեճի, զրույցի, հարց ու պատասխանի կամ փոքր թեստային առաջադրանքի միջոցով: Սա նպաստում է սովորողի սեփական կարծիքի ձևավորմանը, փաստերի, հավաստի տվյալների

միջոցով իր կարծիքը պնդելու, սեփական աշխարհայացի զարգացումը ամրապնդելու համար:

Կարևոր է, որ հանրակրթական դպրոցների սովորողներդ՝ ՀՀ ապագա քաղաքացիները, ձեռք բերեն նաև որոշ կարողություններ թուրքական պետության ժխտողականության և կեղծարարության քաղաքականությանը հակադարձելու համար:

Ուսուցչի՝ պատմության դասին նախապատրաստվելը սկսվում է դասի նպատակի սահմանումով:

Ըստ «Հայրենագիտություն» բնագավառի չափորոշչի և ծրագրերի թեմայի դասավանդման նպատակն է.

- Ձեռք բերել գիտելիքներ Հայոց ցեղասպանության (շարժառիթներ, պատճառներ, ծրագրեր փուլեր, հետևանքներ, պատմական դասեր, ճանաչման գործընթաց, ինքնապաշտպանական մարտեր) վերաբերյալ, ըմբռնել, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը Հայաստանի Հանրապետության, ողջ հայության համար ազգային անվտանգության հիմնախնդիր է:
- Հաղթահարել զոհ լինելու բարդույթները, ձևավորել պատմական արդարության վերականգնման, կորսված հայրենիքի պահանջատեր լինելու, հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում անվտանգ ապրելու և զարգանալու իրավունքի համար պայքարի գիտակցություն, ձևավորել մերժողական վերաբերմունք մարդու կամ որևէ ժողովրդի նկատմամբ կիրառվող բռնությունների հանդեպ՝ կանխելու այսօր էլ շարունակվող բռնությունները:
- Ըմբռնել և արժևորել տվյալ ժամանակաշրջանի ու ներկայիս Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը, պատմական փորձի յուրացման, կորուստներից դասեր քաղելու և հաջորդ սերունդներին դրանց փոխանցման անհրաժեշտությունը:

- Զարգացնել վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողություն, հետազոտական, համագործակցային, ինքնարտահայտման, ինքնավար սովորելու և աշխատելու հմտություններ և կարողություններ։

Թեմայի դասավանդման ակնկալվող արդյունքներն են.

1. Նկարագրի տարածաշրջանի և համաշխարհային քաղաքական իրադրությունը. Հայաստանի իրավիճակը XIX դարի վերջին XX դարի սկզբին, բացատրի հարաբերությունները հարևան և աշխարհի երկրների, ժողովուրդների, միջպետական տարբեր միությունների, կազմակերպությունների հետ, գտնի արդի աշխարհի հետ բազմատեսակ կապերը առաջարկի հարաբերությունների և պատմական զարգացումների այլընտրանքային տարբերակներ, կանխատեսի դրանց հետևանքները։
2. Ներկայացնի և համեմատի պատմական և հասարակական կարևոր փաստերը, երևույթները, իրադարձությունները, վերլուծի դրանց արդյունքները, հետևանքները, պատճառահետևան-քային կապերը, հիմնավորի հայոց և համաշխարհային պատմական իրադարձությունների փոխկապակցվածությունը, կապեր գտնի և հսմադրի արդի պատմական գործընթացներում առկա կարևոր իրադարձությունների և երևույթների հետ։
3. Ճանաչի տվյալ ժամանակաշրջանի ակնառու գործիչների բնութագրի և համեմատի նրանց, գնահատի նրանց գործունեության առանցքային դրվագները։
4. Ներկայացնի 1894-1896 թթ. և 1915-1916 թթ ինքնապաշտպանական մարտերը, համեմատի և վերլուծի դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները, արդյունքներն ու հետևանքները, արժևորի միասնական և փոխհամաձայնեցված գործելու արդյունքները, ցույց տա ազգային, հասարակական, հոգևոր և անձնական շահերի միասնականության կարևորությունը դրված նպատակների իրականացման գործում։

5. Ներկայացնի և վերլուծի 1890 ական թթ. հայերի կոտորածները, դրանց նկատմամբ մեծ տերությունների անտարբերության պատճառներն ու հետևանքները, երիտթուրքական ծրագրերը և հայերի բնաջնջման գործողությունները, Հայոց Մեծ եղեռնի ընթացքն ու հետևանքները։
6. Արտահայտի սեփական տեսակետներ և դիրքորոշումներ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի, պահանջատիրության, ցեղասպանության հետևանքների հաղթահար-ման ուղիների, և հիմնախնդրի զարգացման հեռանկարների և արդյունքների վերաբերյալ, փորձի առաջարկել հիմնախնդրի լուծման տարբերակներ։
7. Գնահատի Հայոց եղեռնի վերաբերյալ մեծ տերությունների, առաջադեմ գործիչների և կազմակերպությունների արձագանքները, հայերին փրկելու անհատ միսիոներների և Հայոց եկեղեցու գործողությունները, կարծիք հայտնի Հայոց ցեղասպանության պատասխանատուների դատավարության, Նեմեսիս գործողության, Հայկական հարցի «լուծման» ռուսական ուղիների, ռուս-թուրքական մերձեցման վերաբերյալ։
8. Ցույց տա Հայոց ցեղասպանության անպատժելիության և XX դարի ցեղասպանությունների կապը, դատապարտի ցեղասպանությունը որպես մարդկության դեմ ուղղված մեծագույն հանցագոր-ծություն. արժևորի և հիմնավորի պատմական փորձի յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը։
9. Նկարագրի և բացատրի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական միջավայրի, համակեցութային հարաբերությունների առօրյա կյանքի ու կենցաղի առանձնահատկությունները Արևելյան Հայաստանում, Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ շրջաններում XIX դարի վերջին, XX դարի սկզբին, կապեր գտնի տվյալ և արդի շրջանի առօրյա կյանքի, կենցաղի և համակեցութային հարաբերությունների միջև։

10. Կապեր գտնի պատմական և արդի գործընթացներում, ցույց տա իր և սերունդների կապը պատմության մեջ, արժևորի և հիմնավորի պատմական փորձի և ձեռքբերումների յուրացման, դասեր քաղելու և հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը:
11. Պարզաբանի կարևոր պատմական եզրույթներն ու հասկացությունները, ճիշտ և տեղին օգտագործի դրանք:
12. Օգտագործի քարտեզներ, ուսումնաօժանդակ գրականություն, ուսումնադիտողական տարբեր պարագաներ, դրսևորի հետազոտելու, տարբեր գործիքակազմեր համադրելու կարողություն, ուրիշների հետ համատեղ կամ ինքնուրույն կատարի նախագծային կամ հետազոտական աշխատանք, առաջադրի խնդիրներ և ներկայացնի լուծումներ:
13. Հավաքի անհրաժեշտ տեղեկություններ տարբեր աղբյուրներից, որոշի, բնութագրի աղբյուրի արժանահավատությունը, արտահայտի և հիմնավորի սեփական դիրքորոշումներ ու տեսակետներ, աղբյուրներն օգտագործելիս կատարի հղումներ: [1]

Դասի մշակում: Դասի պլանի նմուշ-օրինակ

Այս թեման հայերիս բազմադարյան պատմության ամենացավոտ և սև էջերից մեկն է: Դասը ճիշտ կազմակերպելու համար պետք է ընտրել համապատասխան մեթոդներ և հնարներ: Թեմայի առաջնահերթություններից պետք է առանձնացնել ազգային և համամարդկային արժեքներից կարևորությունը:

Թեմայի դասավանդման ընթացքում կարևոր է նաև սովորողների կողմից պատմական երևույթների և գործընթացների պատճառահետևանքային կապերի օրինաչափությունների բացահայտումն է:

[1] «Հայրենագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (5-12 դասարաններ) 3515ba6bd08e27dd503e4d3a9518bf03.pdf (escs.am) (մուտք՝ 19.10. 2022):

Պատմության դասավանդման ընթացքում սովորողները պետք է գիտակցեն, որ պատմական զարգացման պատճառահետևանքային կապերի և օրինաչափությունների պարզաբանման գործընթացում եթեներ գոյություն ունենալ չեն կարող, օրինակ եթե այսինչ երևույթը, գործընթացը, փաստը կամ իրադարձությունը այսպես լիներ, այսպես կլիներ, եթե այսինչ մարդը կամ քաղաքական կուսակցությունը այսպես աներ, այսպես կլիներ և այլն։ Դպրոցականները պետք է լավ գիտակցեն, որ պատմական ստեղծված նոր պայմաններում դրանք կարելի է բացառել միայն մեկ ձևով դրանք չկրկնելով։

Պատմության ուսուցման ընթացքում այն սովորողներն են հասնում լուրջ հաջողությունների, ովքեր տիրապետում են պատճառահետևանքային կապերին, պատմական զարգացման օրինաչափություններին, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև տեղի ունեցող օրինաչափ երևույթներին ու գործընթացներին և հասարակության զարգացման բնականոն օրենքներին։

Սովորողների գիտակցության մեջ արտադրողական միջոցների որոշիչ դերի ձևավորումը անհնարին է առանց պատճառահետևանքային կապերի շղթայի ընկալման ու յուրացման։ Այս շղթայի ամեն մի օղակ հանդիսանում է նախորդի հետևանքը և հաջորդի պատճառը։ Դպրոցականների կողմից պատճառահետևանքային կապերի գիտակցված ընկալման համար անհրաժեշտ է հետևյալը.

1) նրանց մոտ ստեղծել վառ պատկերացումներ այդ շղթայի յուրաքանչյուր օղակի վերաբերյալ,

2) ապահովել այդ օղակների միջև եղած պատճառահետևանքային կապը,

3) միասնական պատճառահետևանքային կապերը ընդհանրացված վերլուծել։[2]

Մեթոդական գրականության մեջ ընդունված է ստուգողավարժողական տիպի բոլոր հանձնարարությունները պարզաբանել պատճառահետևանքային կապերի

[2] Պապոյան Հ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013, էջ 118-121:

միջոցով: Օրինակ ա)1914 թ. օգոստոսի 1-ին սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: բ)Եվրոպայից դուրս քշվելուց հետո թուրքերը գերխնդիր էին դարձրել թուրքական նոր հայրենիքի ստեղծումը: Առաջին հերթին այդ «հայրենիքի» տարածքի մեջ ներառվեց Հայաստանը: գ) Հայ արդյունաբերողներն ու դրամատերերն կարողացել էին խոշոր կապիտալ կուտակել: Աշակերտների պատասխանը պետք է լինի մոտավորապես այսպես, օգտագործելով պատերազմական իրադրությունը՝ երիտթուրքերը հնարավորություն ստացան ազատվելու Հայկական հարցից և տիրանալու հայերի ֆինանսական միջոցներին ու ունեցվածքին:

Դասը կարելի է սկսել խթանման փուլով, պարզելու համար աշակերտների գիտելիքները թեմայի վերաբերյալ: Կարելի է գրատախտակին գրել նրանց կարծիքներտը, կամ 3-5 րոպեանոց փոքրիկ առաջադրանք տալ իրենց կարծիքները գրավոր ներկայացնելու համար: Այնուհետև ուսուցչի կողմից տրվում է «ցեղասպանություն» եզրույթի բացատրությունը, միջազգային հանրության կողմից տրված արձագանքները, պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից ցեղասպանության փաստի ընդունման կարևորությունը:

Քանի որ թեման հայերիս համար շատ զգայուն է, իսկ ավագ դպրոցի սովորողի մոտ աշխարհայացի ձևավորման կարևորագույն ժամանակահատվածներից է, պետք է փորձել զերծ մնալ էմոցիոնյալ իրավիճակներ ստեղծելուց, առկայության դեպքում արագ հաղթահարել:

Իմաստի ընկալման փուլում համառոտ դասախոսությամբ ներկայացվում է նոր նյութը՝ օգտագործելով փաստաթղթեր ու սկզբնաղբյուրներ: Զուգահեռներ անցկացնել 100-ամյա վաղեմություն ունեցող և այսօրվա մեր իրականության հետ: Այստեղ շատ կարևոր է նաև հայերի կողմից իրականացված ինքնապաշտպանությունը, հասարակական, հոգևոր-մշակութային գործունեության ծավալած հայ գործիչների ներդրած ջանքերը:

Կշռադատման փուլում սովորողի նյութի ուսումնասիրման ընկալման աստիճանը ստուգելու համար, հաշվի առնելով յուրաքանչյուր աշակերտի

ունակություններն ու հնարավորությունները, տալ համապատասխան առաջադրանքներ:

Որպես տնային աշխատանք, օգտվելով նաև լրացուցիչ նյութերից պարզել կամ հասկանալ ցեղասպանության եզրույթը, տարբերակել այն մնացած բոլոր ոճիրներից (նպատակահարմար է օգտագործել Վենի դիագրամը, M-ձև և T-ձև աղյուսակները):

Դասը կարելի է ամփոփել փաստերի բուրգի միջոցով: Ուսուցիչը սովորողներին առաջարկում է ստեղծել իրենց գիտելիքների և հմտությունների բուրգ:



Եզրակացություն

Գերարագ զարգացող և փոփոխվող աշխարհը իր հետ առաջ է բերում նորանոր խնդիրներ և մարտահրավերներ, որոնց պետք է շատ արագ հարմարվել: Այստեղ հատկապես կարևորում է ուսումնական գործընթացների ճիշտ կազմակերպումը:

Այսպիսով, դիտարկելով ցեղասպանության թեմայի ուսուցման հետ կապված մի շարք հիմնախնդիրներ՝ հանգում ենք այն եզրակացության, որ «Հայոց ցեղասպանություն» թեմայի դասավանդումը գնալով ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստանում հանրակրթական դպրոցներում:

Նյութը ուսումնասիրելու ընթացքում կապված թեմայի առանձնահատկության հետ ես ցանկացել եմ սովորողների մոտ դաստիարակել և զարգացնել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության և ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն:

Թեմայի դասավանդումը հնարավորություն կտա զարագցնելու սովորողների վերլուծական, քննադատական և ստեղծագործական մտածողությունը, հետազոտական հմտություններն ու կարողությունները:

Թեմայի ճիշտ դասավանդման շնորհիվ հնարավոր կլինի լուծել ՀՀ ապագա քաղաքացիների թուրքական պետության ժխտողականության և կեղծարարության քաղաքականությանը հակադարձելու կարողությունների ձևավորման խնդիրը:

Օգտագործած գրականության ցանկ

1. «Հայրենագիտություն» առարկայի փորձնական չափորոշիչը և ծրագրերը (5-12 դասարաններ) 3515ba6bd08e27dd503e4d3a9518bf03.pdf (escs.am) (մուտք՝ 19.10. 2022):

2. Պապոյան Հ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, 2013, էջ 118-121: